ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N-2

ԵՊՀ ԻՄ Տնտեսագիտության ֆակուլտետի գիտխորհրդի նիստի

27.09. 2022թ. ք. Իջևան

Առցանց կազմակերպած նիստին մասնակցում էին գիտական խորհրդի նախագահ Ա. Մարգարյանը, քարտուղար Ա. Ալեքսանյանը, Մ. Միքայելյանը, Գ. Հովհաննիսյանը, Ա. Պոտոսյանը, Գ. Ալեքսանյանը, Ա. Սարիբեկյանը, Թ. Վարդանյանը, Պ. Ասլիբեկյանը, Գ. Ավետիսյանը, Դ. Աֆյանը, ֆակուլտետի ՈՒԽ-ի նախագահ Թ. Ջանվելյանը, Հ. Սանթրոսյանը:

Նիստի օրակարգը ներկայացրեց Ա. Մարգարյանը:

ՕՐԱԿԱՐԳ

1. 2022-23 ուստարվա առաջին կիսամյակի «Ընդհանուր տնտեսագիտություն», «Տուրիզմի կառավարում և մշակութաբանություն» ամբիոնների աշխատանքային ժամանակացույց-պլանների քննարկում և հաստատում /զեկ. Մ. Միքայելյան, Գ. Հովհաննիսյան/:
2. 2022-23 ուստարվա առաջին կիսամյակի ԿԾՊ-երի աշխատանքային ժամանակացույց-պլանների քննարկում և հաստատում /զեկ. Մ. Միքայելյան, Թ. Վարդանյան/:
3. Տնտեսագիտության ֆակուլտետի մեթոդական խորհրդի կազմի հաստատման մասին /զեկ. Ա. Մարգարյան/:
4. Ընթացիկ հարցեր.
   4.1. 2022-2023 ուստարվա «ԵՊՀ լավագույն ուսանող» մրցանակաբաշխությանը Տնտեսագիտության ֆակուլտետի «Ֆինանսներ» /ըստ ոլորտի/ մասնագիտության IV կուրսի ուսանողուհի Մանե Փիրումյանին ներկայացնելու մասին /զեկ. Ա. Մարգարյան/:

Բաց քվեարկությամբ 13 կողմ, 0 դեմ, 0 ձեռնպահ համամասնությամբ որոշվեց.

Որոշում 2/1

- Հաստատել նիստի օրակարգը:

1. *Լսեցին.- 2022-2023 ուստարվա առաջին կիսամյակի Տնտեսագիտության ֆակուլտետի մասնագիտական ամբիոնների աշխատանքային պլանների քննարկման և հաստատման մասին /զեկ. Մ. Միքայելյան, Գ. Հովհաննիսյան/:*

Ամբիոնի վարիչները ներկայացրին ամբոնների 2022-2023 ուստարվա առաջին կիսամյակի աշխատանքային պլանները: Նրանք նշեցին, որ ամբիոնների աշխատանքային պլանները բխում են ԵՊՀ ԻՄ Տնտեսագիտության ֆակուլտետի աշխատանքային պլանից: (Աշխատանքային պլանները կցվում են):

Ղեկավարվելով ԵՊՀ հիմնադրամի ԻՄ-ի Տնտեսագիտության ֆակուլտետի կանոնադրության 24.2 կետով Տնտեսագիտության ֆակուլտետի գիտական խորհուրդը որոշեց.

Որոշեցին.- Հաստատել «Ընդհանուր տնտեսագիտություն» ու «Տուրիզմի կառավարման և մշակութաբանություն» ամբիոնների 2022-2023 ուստարվա առաջին կիսամյակի աշխատանքային պլանները

2. *Լսեցին.- 2022-23 ուստարվա առաջին կիսամյակի ԿԾՊ-երի աշխատանքային ժամանակացույց-պլանների քննարկման և հաստատման մասին /զեկ. Մ. Միքայելյան, Թ. Վարդանյան/:*

Կրթական ծրագրի ղեկավարները ներկայացրին 2022-2023 ուստարվա առաջին կիսամյակի աշխատանքային պլանները: Նրանք մատնանշեցին, որ աշխատանքային պլանները բխում են ԵՊՀ ԻՄ Տնտեսագիտության ֆակուլտետի աշխատանքային և գիտական խորհրդի նիստերի ժամանակացույց պլաններից: (Աշխատանքային պլանները կցվում են):

Ղեկավարվելով ԵՊՀ հիմնադրամի ԻՄ-ի Տնտեսագիտության ֆակուլտետի կանոնադրության 24.2 կետով Տնտեսագիտության ֆակուլտետի գիտական խորհուրդը որոշեց.

Որոշեցին.- Հաստատել Տնտեսագիտության Ֆակուլտետի 2022-2023 ուստարվա առաջին կիսամյակի ԿԾՊ-երի աշխատանքային ժամանակացույց-պլանները:

3. *Լսեցին.- Տնտեսագիտության ֆակուլտետի մեթոդական խորհրդի կազմի հաստատման մասին /զեկ. Ա. Մարգարյան/:*

Ա. Մարգարյանը հաղորդեց, որ ֆակուլտետի գիտական աշխատանքերն արդյունավետ իրականացնելու համար նպատակահարմար է կազմավորել մեթոդական խորհուրդ: Ա. Մարգարյանը ներկայացրեց խորհրդի կազմը.

1. Մարգարյան Ալեքսան Շամիլի- ֆակուլտետի դեկանի ժ/պ, ֆ.մ.գ.թ., դոցենտ, Ընդհանուր մաթեմատիկայի ամբիոնի դոցենտ,

2. Միքայելյան Միքայել Վարազդատի- Ընդհանուր տնտեսագիտության ամբիոնի վարիչի ժ/պ, տ.գ.դ., պրոֆեսոր, «Ֆինանսներ (ըստ ոլորտի)» կրթական ծրագրի ղեկավար,
3. Հովհաննիսյան Գուրգեն Ժորժիկի- Տուրիզմի կառավարման և մշակութաբանության ամբիոնի վարիչի ժ/պ, ա.գ.թ., պրոֆեսոր,
4. Վարդանյան Թրահեղ Գերասիմի- Տուրիզմի կառավարման և մշակութաբանության ամբիոնի պրոֆեսոր, ա.գ.դ., «Զբոսաշրջություն» կրթական ծրագրի ղեկավար,
5. Պոտոսյան Ակսել Հարությունի- Տուրիզմի կառավարման և մշակութաբանության ամբիոնի պրոֆեսոր, ա.գ.թ.,
6. Աֆյան Դիանա Գրիշայի- ՀՀ ԿԲ Դիլիջանի ուսումնահետազոտական կենտրոնի Մակրոտնտեսական դեպարտամենտի Վիճակագրության վարչության Ընտրանքային հետազոտությունների և վերլուծությունների բաժնի ղեկավար, տ.գ.թ., ասիստենտ,
7. Ալեքսանյան Գոռ Փարսադանի- Տավուշի մարզի տուրիզմի զարգացման գործակալության հիմնադիրների խորհրդի նախագահ,
8. Ալեքսանյան Անժելա Գրիտելի - Ընդհանուր տնտեսագիտության ամբիոնի ասիստենտ:

Ղեկավարվելով ԵՊՀ հիմնադրամի ԻՄ-ի Տնտեսագիտության ֆակուլտետի կանոնադրության 24.18 կետով Տնտեսագիտության ֆակուլտետի գիտական խորհուրդը որոշեց.

Որոշեցին.- Հաստատել Տնտեսագիտության ֆակուլտետի մեթոդական խորհրդի կազմը:

4. Ընթացիկ հարցեր.

4.1. Լսեցին. - 2022-2023 ուստարվա «ԵՊՀ լավագույն ուսանող» մրցանակաբաշխությանը Տնտեսագիտության ֆակուլտետի Ֆինանսներ /ըստ ոլորտի/ մասնագիտության IV կուրսի ուսանողուհի Մանե Փիրումյանին ներկայացնելու մասին /զեկ. Ա. Մարգարյան/:

Ա. Մարգարյանի մատուցմամբ՝ «ԵՊՀ լավագույն ուսանող» մրցանակաբաշխության նպատակն է խրախուսել ուսանողների առաջադիմությունը և խթանել նրանց գիտական ու հասարակական ակտիվությունը: Այն շնորհվում է առավել աչքի ընկած, գերազանց առաջադիմություն և բարձր հասարակական ակտիվություն ցուցաբերած ուսանողին:

Ա. Մարգարյանը հայտնեց, որ ԵՊՀ ԻՄ-ը մրցանակաբաշխությանը ներկայացնում է չորրորդ կուրսի ուսանողուհի Մանե Փիրումյանի թեկնածությունը, ով իր առաջադիմությամբ և բարձր հասարակական ակտիվությամբ բավարարում է վերը նշված չափանիշները: Ա. Մարգարյանն առաջարկեց հավանություն տալ նրա թեկնածությանը:

Ղեկավարվելով ԵՊՀ հիմնադրամի ԻՄ-ի Տնտեսագիտության ֆակուլտետի կանոնադրության 24.8 կետով Տնտեսագիտության ֆակուլտետի գիտական խորհուրդը որոշեց.

Որոշեցին.- Հավանություն տալ Տնտեսագիտության ֆակուլտետի «Ֆինանսներ» /ըստ ոլորտի/ մասնագիտության IV կուրսի ուսանողուհի Մանե Փիրումյանի թեկնածությանը և ներկայացնել 2022-2023 ուստարվա «ԵՊՀ լավագույն ուսանող» մրցանակաբաշխությանը:

Գիտական խորհրդի նախագահ՝ Ա. Մարգարյան

Քարտուղար՝ Ա. Ալեքսանյան